ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2

ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/27 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԱՃՈՒՐԴԻ ՁԵՎՈՎ ԳՆՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՆԻՍՏԻ

ք.Գավառ «04» հուլիսի 2024թ.

ժամը 10:00

Մասնակցում էին

Հանձնաժողովի գնահատող անդամներ՝ Մ.Մովսիսյան /նախագահ/, Ա. Բոշյան, Ն.Մուրադյան,

Քարտուղար՝ Ս.Թամամավեյան

ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/27 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնում կատարելու ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի բացման նիստի մասին

Մ.Մովսիսյան

1) «Գնումների համակարգող /քարտուղար/ Սեդա Թամամավեյանը հայտարարեց, որ Auction էլեկտրոնային համակարգով գնային առաջարկ է ներկայացրել 3 /երեք/ մասնակից՝

N	Մասնակցի անվանումը	Մասնակցի հասցեն
1	«ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ	Ք.Երևան Մարգարյան 45/120 gross-group23@mail.ru
2	Արարատ Բադալյան Սերգուշի Ա/Ձ	Ք.Ջերմուկ Շահումյանի փ"1 2 բն 31 Badaiyan.ararat7@mail.ru
3	«ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ	Ք"Երևան, Նոր Նորք 0090, Գայի պ./Շ/11/20 foodcityavan@yandex.ru

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

2) Auction էլեկտրոնային համակարգի կողմից ավտոմատ մերժվել են «ԳՌՈՍՍ ԳՐՈՒՊ» ՍՊԸ-ի և «ՖՈՒԴՍԻԹԻ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտերը՝ նախահաշվային գնից բարձր գին ներկայացնելու պատճառով:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

3) Ուսումնասիրելով ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/27 ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ձևով գնման ընթացակարգի մասնակցի կողմից ներկայացրած հայտը պարզվեց.

3.1) Արարատ Բադալյան Սերգուշի Ա/Ձ-ի կողմից ներկայացված հայտը չի համապատասխանում հրավերով սահմանված պահանջներին մասնավորապես՝

- Հայտով ներկայացված առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրում սխալ է լրացված «ֆիրմային անվանումը», «ապրանքնային նշանը», «մակնիշը» և «արտադրողի անվանումը» սյունակները:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

Հիմք ընդունելով ՀՀ Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի 526-Ն որոշման 41-րդ կետը և 2024 թվականի հունիսի 21-ին ԳՄԳՀ-ԷԱՃԱՊՁԲ-24/27 ծածկագրով հայտարարված էլեկտրոնային աճուրդի հրավերի փաթեթի Ի-ին մասի 8.11 կետի պահանջները, **գնահատող հանձնաժողովը որոշեց՝** կասեցնել նիստը 1 (մեկ) աշխատանքային օրով՝ Արարատ Բադալյան Սերգուշի Ա/Ձ-ին առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 08/07/2024 թվականի ժամը 18:00-ն, շտկել վերը նշված անհամապատասխանությունը և Auction էլեկտրոնային համակարգի միջոցով ինչպես նաև Գավառի

համայնքապետարանի էլեկտրոնային փոստի միջոցով գնահատող հանձնաժողովին ներկայացնել համապատասխան փաստաթղթերը:

Վերը նշված անհամապատասխանությունները չշտկելու դեպքում մասնակցի հայտը կգնահատվի հրավերի պահանջներին չհամապատասխանող (անբավարար) և կմերժվի՝ դիտելով որպես գնման գործընթացի խախտում՝ ներառելով գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

7) Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել սույն թվականի հուլիսի 9-ին ժամը 12:00-ին՝ ք.Գավառ, Գր.Լուսավորչի 12 երկրորդ հարկ, 8-րդ աշխատասենյակ հասցեում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ 0:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ		
ՆԱԽԱԳԱՀ՝		Մ.ՄՈՎՍԻՍՅԱՆ
ԱՆԴԱՄՆԵՐ՝		Ա.ԲՈՇՅԱՆ
		Ն.ՄՈՒՐԱԴՅԱՆ
ՔԱՐՏՈՒՂԱՐ՝		Ս.ԹԱՄԱՄԱՎԵՅԱՆ